ԳՐԱԿԱՆ ՀԱՐՑԱԴՐՈՒՄՆԵՐԸ ԱՐԵՄՏԱՀԱՅ ԳՐՈՂՆԵՐԻ 1918-1920 ԹԹ. ՆԱՄԱԿՆԵՐՈՒՄ

ՔՆԱՐԻԿ ԱԲՐԱՀԱՄԵԱՆ
բ.գ.թ., Խ. Աբովեանի ան. ՀՊՄՀ Վ. Պարտիզունու ան. Հայ նոր եւ նորագոյն գրականութեան եւ նրա դասաւանդման մեթոդիկայի ամբիոնի դոցենտ

Բանալի բառեր - Առաջին Հանրապետութիւն, գրականութիւն, նամակագրութիւն, արեւմտահայ գրողներ, գրական հարցադրումներ, Մշակութային Հայաստան, Լեւոն Շանթ, Երուանդ Օտեան, Զապէլ Եսայեան, Արշակ Չօպանեան, Վահան Թէքէեան:

Ключевые слова: Первая Республика, литература, корреспонденция, западноармянские писатели, литературные вопросы, Культурная Армения, Левон Шант, Ерванд Отян, Забел Есаян, Аршак Чопанян, Ваан Текеян.

Key words: The First Republic, literature, correspondence, Western Armenian writers, literary questions, Cultural Armenia, Levon Shant, Yervant Odian, Zabel Yesayan, Arshag Chobanian, Vahan Tekeyan.

Ժողովրդի կեանքում տեղի ունեցող բախտորոշ ու հանգրուանային իրադարձութիւնները միշտ էլ այս կամ այն կերպ անդրադարձ են գտնում ամենատարբեր ոլորտներում, այդ թւում եւ՝ գրական-մշակութային դրսեւորումների համատեքստում: Կախուած դրանց տարողութիւնից կամ առանձնայատկութիւններից՝ այդ արձագանգը կարող է երկակի լինել. ամլութեան դատապարտել գրամշակութային դաշտը կամ առիթ դառնալ նոր նշաձողերի սահմանման:

Եթէ մասնաւորելու լինենք գրականութեան առումով, կարող ենք նկատել, որ այդ արձագանգները առաջին հերթին երեւան են գալիս ակնարկային ժանրերի միջոցով՝ թղթակցութիւններ, քրոնիկներ, նաեւ՝ նամակագրութեան մէջ: Իսկ որ նամակները հասարակական տեղաշարժերի անմիջական արտայայտիչ կարող են լինել, մեզ յայտնի են դեռ հին հռոմէական գրականութիւնից (Հորացիոս. Օվիդիոս), Աստուածաշնչեան յայտնի թուղթ-նամակներից, հայ հին գրականութեան մէջ ընդհանրական նշանակութիւն ստացած թղթերից եւ գալիս հասնում են մինչեւ այսօրուայ բաց-նամակները: Սա այսպէս է, որովհետեւ առաւել լայն կտաւի գործերը

ստեղծագործական տեւական ժամանակի եւ նաեւ պատմական աւարտուն ժամանակի են կարօտում:

Մեր այս յօդուածում փորձել ենք ի մի բերել գրական հարցադրումները, որոնք արտացոլուել են արեւմտահայ գրողների՝ Առաջին Հանրապետութեան շրջանի նամակներում: Զուտ արեւմտահայ գրողների ընտրութիւնը թելադրուած է ոչ միայն հայ գրականութեան մէջ առ հասարակ քննութեան մեծ ծաւալներից, այլեւ այդ շրջանում արեւմտահայ մտաւորականութեան անվիճարկելի դերակատարութեամբ:

Ի հա՛րկէ, խօսել գրական մեծաքանակ նուաճումների մասին, դժուար է, քանի որ քաղաքական իրադրութիւնը երկու հատուածներում էլ շարունակում էր մնալ լարուած. Արեւելահայաստանում ժողովուրդը զբաղուած էր պետականաշինութեան դժուարին գործով, իսկ արեւմտահայութեան մնացորդացը, թէպէտ թեւակոխել էր Զինադադարի շրջանը, սակայն շարունակում էր կրել թուրքական հայահալած քաղաքականութեան ծանր հետեւանքները յատկապէս Կիլիկիայի տարածքում, ուր հայ մտաւորականներից շատերը ստիպուած որբահաւաք գործունէութիւն էին ծաւալում: Յիշենք թէկուզ Զապէլ Եսայեանի օրինակը:

Գրողների համար նման մթնոլորտը, մեղմ ասած, ստեղծագործական լիցքերի ժամանակ ու տրամադրութիւն չէր թողնում: Աւելին՝ նրանցից շատերի, ինչպէս Լեւոն Շանթի, Նիկոլ Աղբալեանի, Յովհաննէս Թումանեանի, Վահան Թէքէեանի եւ այլոց պարագայում, գործունէութեան դաշտը գերակշիռ մասով մնում էր ազգային-քաղաքականը, ինչը իր արտացոլումն էր գտնում նաեւ նամակներում: Չմոռանանք, որ Առաջին Հանրապետութիւնը իր դիմագծով հենց մշակութային էր՝ ինչ-որ տեղ մեր մտաւորականութեան՝ 20-րդ դարասկզբից հրապարակ նետած Մշակութային կամ Հոգեւոր Հայաստան հասկացութիւնների իւրօրինակ կերպաւորումը: Եւ այս պայմաններում, բնական է, որ պետականութեան գաղափարի ընկալումն էլ թելադրուած էր հենց բանաստեղծական ըմբռնումից: Ի հա՛րկէ, այս առումով ամէնից բնորոշը Ամենայն Հայոց բանաստեղծի տասնեակ նամակներն են, ինչին անդրադարձել ենք մէկ այլ առիթով, եւ ինչը այս յօդուածում մեր խնդրառութիւնից դուրս է:

Եթէ վիճակագրօրէն նայելու լինենք գրողների այդ շրջանի նամակների հասցէատէրերին, ապա դրանք հիմնականում ուղղուած են

Առաջին Հանրապետութեան կառավարութեանը, առաջին այրերին՝ Ալեքսանդր Խատիսեան, Նիկոլ Աղբալեան, Համօ Օհանջանեան եւ ուրիշներ: Այդ բոլոր նամակներում, այդ թւում եւ սեփական ընտանիքներին ուղղուած[1], կարմիր թելի պէս անցնողը հենց ժողովրդի ու պետութեան, արուեստագէտի ու երկրի յարաբերութեան հարցադրումներն են, որտեղ միասնական են նաեւ մեր երկու հատուածների ընկերային եւ մշակութային դէմքերի մօտեցումներն ու գործունէութեան ուղղութիւնները: Այս առումով ուշագրաւ է Անդրանիկի եւ Թումանեանի նամակագրութեան մի բնորոշ դրուագ, երբ ի պատասխան Թումանեանի՝ իր կոչին ուղղուած նամակի, Զօրավարը գրում էր. «Պէտք է մոռնանք պահ մը գրիչը՝ փոխարինելով սուրին, ստեղծելու համար հայրենիքը, որուն խաղաղ ծոցին մէջ միայն կը ծաղկի գեղարուեստի կեանքը»[2]:

Ինչ մնում է զուտ գեղարուեստական գործերի վիճակագրութեանը, ապա պիտի արձանագրել, որ այս շրջանում լոյս է տեսել, եթէ կարելի է այդպէս կոչել, «ծրագրային» գրականութիւն, ինչպէս օրինակ Զապէլ Եսայեանի թարգմանութիւնները ("La situation des arméniens de Turquie exposeée par des documents" / Հանրի Բարբի հետ), Արամ Անտոնեանի «Այն սեւ օրերուն» գիրքը (Բոստոն, 1919), հայկական ջարդերի մասին մէկ այլ գործի ֆրանսերէն թարգմանութիւնը ("Documents officiels concernant

---

[1] Զապէլ Եսայեանը՝ աշխարհի հինգ ամենաանվախ կանանցից մէկը, Կիլիկիայում տագնապալի օրերին, զբաղուած էր որբահաւաքման եւ նրանց համար աւելի ապահով վայրերում հանգրուաններ որոնելու մաշող աշխատանքով՝ ձգտելով փրկել հայ ժողովրդի այդ փոքրիկ «մնացորդաց»ը: Այդ մասին կարդում ենք նրա՝ 1920 թ. Փետրուարի 24-ին Ալեքսադրիայից Ազգային Պատուիրակութեան ղեկավար Պօղոս Նուպարին ուղղուած նամակում. «Վաղը կը մեկնիմ «Սֆինքս» շոգենաւով դէպի Կիլիկիա. ներկայ պայմաններուն մէջ անշուշտ անհնար է դպրոցներու գործով զբաղիլ, բայց մտածեցի, որ այսուամենայնիւ պարտաւոր եմ չի յետաձգել ճամբորդութիւնս...» (**Եսայեան Զ.**, Նամակներ, Եր., Երեւանի Համալսարանի հրատ., 1977, էջ 154): Ուշագրաւ է այն, որ այս պայմաններում նա իւրօրինակ «որբութեան» էր դատապարտել սեփական զաւակներին, որոնց համար փորձում էր նաեւ տիպար մօր օրինակ ծառայել. ահա Սօֆի եւ Հրանդ Եսայեաններին Մերսինից 1920-ի Մարտի 27-ին նրա ուղղած նամակը. «Եթէ այս վտանգաւոր օրերին ես հեռանայի, մարդիկ պիտի կարծէին, թէ ինչ-որ պատրուակով փախուստ եմ տուել: Դուք, անշուշտ, պիտի չուզենայիք, որ նման կասկածի թէկուզ նշոյլն ունենային իմ նկատմամբ» (**Նոյն տեղում**, էջ 157):

[2] «**Վերածնունդ**» / կիսամսեայ հանդէս, Բ. տարի, 14 Յունիս, 1 Յուլիս, 1918, Փարիզ, թիւ 12-13, էջ 290:

les massacres arméniens; repridaction photographique d'un grand nombre de documents", Paris, 1920), Սմբատ Բիւրատի «Արիւնի ձորը» Կիլիկեան կեանքից վերցուած վիպակը (Բոստոն, 1919), Միքայէլ Շամտանճեանի «Հայ մտքին հարկը եղեռնին» (աքսորականի մտածումներ եւ զգացողութիւններ) գիրքը (Պոլիս, 1919), պոլսահայ մամուլում Երուանդ Օտեանի՝ մինչեւ Դէր-Զօր կատարած ահասարսուռ ճամբորդութիւնների մասին «Թիւ 17 Խաֆիէն» վէպը, որ առանձին գրքով լոյս տեսաւ միայն 1937-ին, Պէյրութում: Դրանք հիմնականում պատմում էին Թուրքիայում ժողովրդի կրած տառապանքների մասին եւ աւելի շատ տեղեկատուական բնոյթ ունէին:

Գրական կեանքի կազմակերպման գործում առանձնակի դերակատարում ունի Արշակ Չօպանեանը: Թերեւս այս հանգամանքը պայմանաւորուած է նրանով, որ նա այդ ժամանակ ապրում էր Փարիզում, այսպէս կոչուած, համեմատաբար աւելի հանգիստ միջավայրում, ասում ենք համեմատաբար, քանի որ Փարիզում հանգրուանած մտաւորականներն իրենց վրայ էին վերցրել Ազգային Պատուիրակութեան առաքելութիւնը, եւ այնտեղից մի տեսակ համակարգում էր գրական կեանքը: Իսկ արեւելահայ եւ արեւմտահայ մեր գրական սերուցքը կարծես դէմ չէր «հաշուետու լինել» հենց նրան: Յիշենք թէկուզ Զապէլ Եսայեանի, Աւետիք Իսահակեանի, Վահան Թէքէեանի, Երուանդ Օտեանի եւ այլոց՝ նրան ուղղուած նամակները:

Այս առումով հետաքրքրական է Արշակ Չօպանեան-Աւետիք Իսահակեան երկխօսութիւնը (վերջինս բանաստեղծութիւններով մնայուն աշխատակցութիւն էր ապահովում Արշակ Չօպանեանի՝ այդ տարիներին Փարիզում հրատարակած «Վերածնունդ» կիսամսեայ հանդէսին), որտեղ երեւան են գալիս Չօպանեանի՝ Բրեստ Լիտովսկի պայմանագրի հետ կապուած յուսահատական տրամադրութիւնները եւ միաժամանակ գրողների եւ արուեստագէտների պատասխանատուութիւնը երեւան բերող դիտարկումները. «Կ'ըմբռնեմ, որ այդ տրամադրութեանց մէջ Ձեզ անկարող զգաք բան մը գրելու. երբ կարենաք, անշուշտ չէք մոռնար «Վերածնունդ»ը: Մի վիատիք, սակայն: Մեր ազգը եւ մեր cultur-ը չեն կորչիր:

Անոնք նոյնիսկ հակառակ բոլոր աղէտներուն՝ մեծ ապագայ կրնան ունենալ՝ եթէ մենք՝ արտասահմանի հայերս կորովով եւ թաքթով գործենք»[3]:

Արեւմտահայ գրականութեան ոստանում՝ Պոլսում նոյնպէս գրականութիւնն առանձնակի վերելք չէր ապրում: Զինադադարի շրջանում այստեղ հանգրուանած Երուանդ Օտեանը «Ժամանակ»ի եւ «Վերջին լուր»ի համար միայն քաղաքական լուրեր հասցնող թղթակիցների կարիքն ունէր, ինչի շուրջ դիմում էր գրական մարդկանց՝ Արշակ Չօպանեանին, Աւետիս Ահարոնեանին, Վահան Թէքէեանին. այդ են վկայում Ա. Չօպանեանին նրա յղած նամակները[4]: Ինչ մնում է գրականութիւն մշակելուն, նրա դիտարկումը խիստ անմխիթարական է. «Հոս գրական հրապարակին վրայ ամլութիւնն է, որ կը տիրէ կամ աւելի գէշ բան մը, մեռելութիւն: Գերեզմանապահի զգայնութիւնը ունիմ»[5]:

Ստեղծագործական առանձնակի լիցքեր չի գտնում 1918-ի Հոկտեմբերին Հայոց Ազգային Պատուիրակութեան մէջ «յոյժ պատուաբեր» պաշտօն զբաղեցնող՝ եգիպտահայոց ներկայակացուցիչ ընտրուած Վահան Թէքէեանը, երբ Արշակ Չօպանեանին Երուսաղէմից 1918 թ. Յուլիս 20-ին ուղղուած նամակում «արդարանում է», թէ՝ «Կ'ուզէի ոտանաւոր մըն ալ ես ղրկել «Վերածնունդ»ին համար, բայց թուղթերս աչքէ անցուցի եւ բան մը չգտայ, որ **այսօրուան** յարմարէր (**այսօրուան**-ը հեղինակի ընդգծումն է – Ք.Ա.): Պէտք է թողուլ ատոնք հատորիկի մը, որ իբրեւ վկայարան մը մեր այս քանի մը տարուան մէջ կրած յուզումներուն, ժամանակագրական արժէք մը ունենայ թերեւս»[6]: Խօսքը 1919-ին Փարիզում լոյս տեսած «Կէսգիշերէն մինչեւ Արշալոյս» խորհրդանշական ժողովածուի մասին է, որտեղ «կէսգիշերը» ժողովրդի անլուր տառապանքների ժամանակահատուածն էր, «արշալոյսը»՝ նորոգ Հայաստանի երեւոյթը:

Եթէ ընդհանրացնելու լինենք, կարող ենք նկատել, որ այս շրջանում, որքան էլ երկրի դիմագրաւած դժուարութիւնների շուրջ մտահոգութիւններն առաջնային են, բայց ընդհանուր մթնոլորտը ռոմանտիկան-զգացական է, իսկ ժողովրդի ճակատագրի մասին դատողութիւնները՝

---

[3] **Չօպանեան Ա.**, Նամականի, Եր., «Սովետական գրող», 1980, էջ 135:

[4] **Օտեան Ե.**, Նամակներ, Եր., ԳԱԹ հրատ., 1999, էջ 244-245:

[5] **Նոյն տեղում**, էջ 244:

[6] **Թէքէեան Վ.**, Նամականի / կազմեց, խմբագրեց եւ ծանօթագրեց Աւետիս Գ. Սանճեան, Լոս Անճելըս, հրատ. Թէքէեան Մշակութային Միութեան, 1983, էջ 200:

հիմնուած այն բանաստեղծական երազանք-տեսլականի շարունակականութեան վրայ, որ արուեստագէտներին յուշել են դեռ նախորդները՝ Ղեւոնդ Ալիշանը, Մկրտիչ Պէշիկթաշլեանը, Միքայէլ Նալբանդեանը, Րաֆֆին եւ ուրիշներ, եւ որի շարունակականութեան ու իրաւացիութեան մարմնաւորումն է Առաջին Հանրապետութեան ծնունդը, ինչի առթած հպարտութիւնն այսօր էլ կենսունակ է պահում պետականութեան ընկալման մեր զգայաչափը եւ մղում նորանոր իրագործումների:

Այս առումով բնութագրիչ է հենց այդ պետականութեան դիրքերում կանգնած Լեւոն Շանթի մօտեցումը, որը նրա ծննդաբանութիւնը կապում էր հենց բանաստեղծական երազանքի հետ, երբ կուսակցական-պետական գործիչ Արտաւազդ Հանըմեանին Լօզանից ուղղուած 1918-ի Յունիս 30 թուագրուած նամակում գրում էր. «Վերջապէս ծնաւ մեր բանաստեղծներու[7] այնչափ երգած «Մանուկն Հայաստանը». ծնաւ արեան ծովերի մէջ, բայց մարդկային ճակատագիրն է այս. ինչպէս ամէն մարդ, այնպէս ալ ամէն ժողովուրդ իր անհատականութիւնը կը ստանայ ծննդեան ցաւերով եւ արեան միջոցով: Ես կը հաւատամ մեր նորածինի մեծ ապագային»[8]:

Ռոմանտիկ Լ. Շանթն այստեղ աչքը քթթում էր դեռ 19-րդ դարի առաջին կէսին այդ երազանքով ապրող, հայրենասիրական շնչով առանձնացած մեր միւս ռոմանտիկ բանաստեղծին՝ Ռափայէլ Պատկանեանին.

---

[7] Հետաքրքրական են այս առումով Յովհաննէս Թումանեանի՝ աւելի վաղ գրուած եւ մի փոքր այլ ենթատեքստ ունեցող «Մեր նախորդ շրջանի բանաստեղծները» յօդուածը եւ «Մեր նախորդներին» բանաստեղծութիւնը, որտեղ նորից հասցէատէրերը վերոնշեալ արուեստագէտներն են, Արշակ Չօպանեանի՝ իր ուսուցիչ, այդ նոյն շրջանը մարմնաւորող Սրապիոն Թղլեանին գրական գործունէութեան 60 ամեակի առթիւ յղուած նամակը, ուր նկատում է. «…Դուք մեծ մարդ էք «հայ» մշակոյթի իբր ուսուցիչ, գեղեցկին պաշտամունքը, վեհ զգացմանց հատուցումը ազգի ու հայրենիքի ջերմ սէրը, **ճաշակը**, աղուոր-աղուրոր հայերէնը, բարձր գրականութիւնը, Դուք գիտցած էք՝ բազմաթիւ տարիներու ընթացքին՝ տարածել հայ սերունդին «մէջ»… Մինչեւ այսօր կը յիշեմ այն սիրուն խանդավառութիւնը, որով կը կարդայիք ու կը բացատրէիք Ալիշանի կամ Պէշիկթաշլեանի կամ Հիւկոյի էջերը. ես պարտական եմ Ձեզի» (**Չօպանեան Ա.**, Նամականի, Եր., «Սովետական գրող», 1980, էջ 136):

[8] **Շանթ Լ.**, Երկերի ժողովածու ինը հատորով, հ. 9 / Նամակներ եւ բացիկներ, Եր., 2017, էջ 278:

Կեցցէ՛ շատ օրեր մանուկ – Հայաստան
Նա՝ որ դեռ միայն մեր սրտի խորքում
Ունի իւր հիմքը, ո՛չ տուն, ո՛չ կայան
Չունի տակաւին բուն Հայաստանում[9]:

Լեւոն Շանթն ու իր սերունդը եղան հենց այն երջանիկները, որոնք արձանագրեցին նախորդների՝ «միայն սրտի խորքում» փայփայուած ցանկութեան իրագործումը բուն Հայաստանում, ինչը, ցաւօք, տեւական կեանք չունեցաւ եւ իր արտայայտութիւնը գտաւ նոյն Շանթի «Ինկած բերդի իշխանուհին» դրամայում (1921), բայց անխօս մեզ բոլորիս բերեց դարակազմիկ իրողութեան առջեւ, որից այն կողմ սկսւում է պետականութեան խորհուրդների մշտամնայ ճանաչողութիւնը, ինչն ամէնից կարեւոր դասն է:

Резюме

Литературные вопросы в письмах западноармянских писателей 1918-1920 гг.

К. Абраамян

Статья посвящена литературным вопросам, которые видны в письмах Западноармянских писателей в течение Первой Республики. Несмотря на жесткие политические условия, культура и государственность, казалось, были переплетены.

Честно говоря, мы можем подтвердить, что Первая Республика со своими чертами была культурная, по-своему изображение понятий “Духовнои” или “Культурной Армении”, как называли армянские интеллектуали в начале двадцатого века.

В статье автор попытался охарактеризовать роль и значение культурных лиц на пути развития независимой страны.

Корреспонденция может также быть интересним, потому что в письмах, зависимо от их жанровых различий и часто весьма индивидуальной природы, оцрнки и беспокойство предоставляются более искренно и «без галстуков», но просто и ближе к истину.

---

[9] **Պատկանեան Ռ.**, Երկեր, Եր., «Սովետական գրող», 1980, էջ 84 (տե՛ս «Հայ պատանին երգում է» բանաստեղծութիւնը):

Автор статьи попытался показать направления литературных вопросов, которые принесли западноармянские авторы, Левон Шант, Забель Есаян, Ервант Отян, Аршак Чопанян, Ваан Текеян и другие.

Summary

Literary questions in correnspondence of western armenian writers 1918-1920s

K. Abrahamyan

The article is dedicated to questions of literature in The First Armenian Republic through correspondences of Armenian writers. We point that, in spite of political difficulties typical for the period, cognition of cultural unity and statehood were highly emphasized. In fact, we can establish that The First Republic was cultural in its nature: we can say that it reflected the concepts of "Cultural Armenia" or "Spiritual Armenia" brought over by the prominent thinkers of the half of the 20th century.

In this article we have tried to show the role our cultural and literary figures had on the perspective of development in the period of independent statehood establishment. The choice of correspondence can also be quite fascinating, because in letters, conditioned by their genre and impersonal nature, the opinions on certain phenomena in the society as well as particular concerns are expressed in a more direct and informal way, at the same time clearly and close to reality.

The author of the article tried to show the destination of literary questions that Western Armenian literary persons brought over in their letters (Levon Shant, Zapel Yesayan, Arshag Chobanian, Yervant Otian, Vahan Tekeyan and others).

ՆԻԿՈԼ ԱՂԲԱԼԵԱՆԻ ՄԱՆԿԱՎԱՐԺԱԿԱՆ ՀԱՅԵԱՑՔՆԵՐԻ ԱՐԴԻԱԿԱՆՈՒԹԻՒՆԸ

ՄԱՐԳԱՐԻՏ ԱՍԱՏՐԵԱՆ
մ.գ.թ., Խ. Աբովեանի ան. ՀՊՄՀ Մանկավարժութեան տեսութեան եւ պատմութեան ամբիոնի դոցենտ

Բանալի բառեր - Նիկոլ Աղբալեան, մանկավարժական հայեացքներ, դաստիարակչական հիմնախնդիրներ, մանկավարժական վարպետութիւն, մանկավարժական ռեֆլեքսիութիւն, մանկավարժական գործունէութիւն, մասնագիտական ինքնակրթութիւն, գրականութեան ուսուցիչ, խօսքի մշակոյթ, հայեցի դաստիարակութիւն:

Ключевые слова: Никол Агбалян, педагогические взгляды, педагогические проблемы, педагогическое мастерство, педагогическая рефлексия, учитель литературы, педагогическая деятельность, педагогическое самообразование, культура речи, национальное самосознание.

Key words: Nikhol Agbalyan, pedagogical views, teacher of literature, pedagogical issues, pedagogical skills, pedagogical reflection, pedagogical practice, pedagogical self-education, language arts, national identity.

Քսաներորդ դարասկզբին Հայաստան աշխարհին ու ամբողջ հայութեանը վիճակուած էր դիմակայել ժամանակի օրհասական մարտահրաւէրներին, որոնցից էր՝ օսմանեան, ցարական, տիրապետութեան տակ գտնուող ժողովրդի ազգային ինքնութիւնը կորցնելու, ուծացման ենթարկուելու վտանգը: Պատահական չէր, որ մի ներքին, անյետաձգելի անհրաժեշտութիւն էր առաջացել շտկել այդ կործանարար իրողութեան ընթացքը, եւ դարաշրջանի մարտահրաւէրներին ընդառաջ ելաւ մի սերունդ, որն անմնացորդ մաքառումով նուիրուեց հայրենիքի փրկութեան սուրբ գործին, քանզի հայ ժողովրդին վիճակուած էր պայքարել, փրկութեան ուղիներ որոնել՝ վերականգնելու համար ազգային նկարագիրն ու անկախութիւնը:

Աներկբայ է, որ նորագոյն պատմութեան այս փուլում վերարժեւորւում են քաղաքական-մշակութային արժէքներն ու համոզմունքները, եւ, յիրաւի, յիշատակման են արժանի այնպիսի անուններ, ինչպիսիք են Գարեգին